ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2021 թվականի N 20

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Արտաշ Արամի Նաղդալյանին սեփականության իրավունքով պատկանող 0020-0009 ծածկագրի 0.08 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 3 փողոց N 54 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի մարտի 9

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2021 թվականի N 21

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածի 8-րդ և 22.1 կետի պահանջներով՝ ***որոշում եմ***.

1. Արտաշ Արամի Նաղդալյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 3-րդ փողոց N 54 հասցեում գտնվող 0.08 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված 46.5 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 35.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 11.5 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ կառույցներն օրինական ճանաչելու համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի մարտի 9
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2021 թվականի N 22

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի՝ 2021 թվականի մարտի 2-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին» N 19 որոշման կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշման 1-ին կետում «՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ շենքի» բառերը փոխարինել «պահեստարանների» բառով:
   2) Որոշման 2-րդ և 3-րդ կետերում «՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ շենքերի» բառերը փոխարինել «պահեստարանների» բառով:
   3) 4-րդ կետում «՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ» բառերը փոխարինել «պահեստարանների» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի մարտի 9

գ. Նոր Արտամետ